ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« 23 » փետրվարի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-11/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի 09.02.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Ալմաքսիմս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 09.02.2016թ. ներկայացրած բողոքով «Ալմաքսիմս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), ի թիվս այլ ընկերությունների, հայտ է

ներկայացրել նաև «Ալմաքսիմս» ՍՊԸ-ն: Հունվարի 27-ին Ընկերությունը ստացել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.01.2016թ. կայացած նիստի N 2 արձանագրությունը, որի համաձայն «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ անհիմն պատճառաբանությամբ, այն է՝ գնային առաջարկի բոլոր էջերը ստորագրված և կնքված չեն եղել:

Ընկերությունը նշել է, որ ինչպես հայտով ներկայացված բոլոր փաստաթղթերը և հավելվածները, այնպես էլ գնային առաջարկը ստորագրված և կնքված է եղել «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 27-րդ հոդվածի և Հրավերի հրահանգ 5-րդ մասի՝ հայտերը պատրաստելու կարգի պահանջներին համապատասխան:

Բացի այդ Ընկերությունը հայտնել է, որ «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի գնային առաջարկը նկատելի տարբերությամբ նվազագույն գնային առաջարկն էր:

«Ալմաքսիմս» ՍՊԸ-ն գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 27-րդ, 30-րդ և 31-րդ հոդվածներով սահմանված պահանջները և անհարկի, առանց իրավական հիմքի մերժվել է «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը: Մասնավորապես, Ընկերության հայտը համապատասխանել է Օրենքի 27-րդ հոդվածով սահմանված դրույթներին, ինչպես նաև Հրավերի 1-12 մասերով սահմանված բոլոր պահանջներին:

«Ալմաքսիմս» ՍՊԸ-ն նշել է, որ ներկայացրած գնային առաջարկը կազմվել է Օրենքի, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) և Հրավերի շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 4-րդ մասի՝ հայտի գնային առաջարկի և 5-րդ մասի՝ հայտերը պատարաստելու կարգին համապատասխան:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Ալմասքսիմս» ՍՊԸ-ն խնդրել է՝

1. Դադարեցնել «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. հունվարի 25-ին ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով՝ «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2. Կիրառել ժամանակավոր միջոց. կասեցնել «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը:

Կենտրոնում 15.02.2016թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած հանձնաժողովի նիստին «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի տնօրենը բողոքը պնդեց ամբողջությամբ:

2. «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) նույն հարցի կապակցությամբ 29.01.2016թ. թիվ 08-29 գրությամբ 29.01.2016թ. ժամը 11:31-ին ստացված ահազանգի վերաբերյալ հայտնել է, որ «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի հայտի մերժման հիմքը համապատասխանում է իրականությանը և բխում է Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետով, 31-րդ հոդվածի 1-ին կետով, Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետով, «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.2 կետի 4-րդ ենթակետով, 2-րդ մասի 3.3 կետով և 2-րդ մասի 5.1 կետով սահմանված պահանջներից:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ մասնակցի կողմից ներկայացվող գնային առաջարկի օրինակելի ձևը առաջադրված է հրավերի Հավելված 4-ով: Այն հստակ արտահայտում է մասնակցի հայտարարությունը՝ հրավերի և պայմանագրի պայմաններին ծանոթացված լինելու և դրանց հիման վրա գնային առաջարկ ներկայացնելու մասին: Այդ հայտարարությունը և առաջարկված գնի ձևը հրավերով առաջադրված է մեկ էջով և պետք է վավերացված լինի մասնակցի կնիքով ու ներկայացուցչի ստորագրությամբ: Հրավերի 2-րդ մասի 1.2 կետով սահմանված է, որ «Նպատակահարմարության դեպքում Մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել նույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները»:

Պատվիրատուն նշել է, որ «Ալմաքսիմս» ՍՊԸ-ն գնային առաջարկը ներկայացրել է մի քանի էջով, սակայն ստորագրված է եղել միայն վերջին էջը, որտեղ բացակայում է և հայտարարությունը և գնային առաջարկի բաղադրիչները: Ըստ Պատվիրատուի՝ ստացվում է, որ մասնակիցը խախտել է գնային առաջարկի և բովանդակային պահանջները և վավերապայմանները, ինչը հանդիսանում է հայտի պարտադիր մերժման հիմք:

«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն գտնում է, որ «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է ՀՀ գնումների մասին օրենսդրության բոլոր պահանջների խիստ պահպանմամբ և Ընկերության բողոքը անհիմն է:

Անհրաժեշտ է նշել, որ Կենտրոնը 10.02.2016թ. թիվ 01/04.1/384-16 գրությամբ «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի 09.02.2016թ. ներկայացրած բողոքի վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին, որի վերաբերյալ վերջինս մինչ օրս կարծիք չի տրամադրել:

Կենտրոնում 15.02.2016թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած հանձնաժողովի նիստի վերաբերյալ Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով՝ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. <u>ԳԲԽ-11/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-11/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ալմաքսիմս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2016թ. հունվարի 25-ին ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացվել է որոշում, համաձայն որի «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի հայտը մերժել, քանի որ «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի գնային առաջարկի էջերը սահմանված կարգով կնքված և ստորագրված չեն եղել:

4. **<u>ԳԲԽ-11/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի 09.02.2016թ. ներկայացրած բողոքը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, հայտնում է հետևյալը.

Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում և կնքվում է (եթե կիրառելի է) այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Հրավերի 1-ին մասի 7.2 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկները:

Նույն հրավերի 2-րդ մասի՝

- 3.3 կետի համաձայն՝ հայտում ներառված բոլոր կնքված փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն կնքողի կողմից,
- 5.1 կետի համաձայն՝ Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Հայտը փաստաթղթային ձևով ներկայացնելու դեպքում Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը, ինչպես նաև սույն հրավերի

2-րդ մասի՝ հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը /տեղեկությունները/, կազմվում են բնօրինակից /բացառությամբ 3-րդ կողմի կողմից տրամադրված կամ հաստատված փաստաթղթերի, որոնց դեպքում ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և 1 օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված Մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Այսպիսով, Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետով և 31-րդ հոդվածի 1-ին կետով, Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետով, «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.2 կետի 4-րդ ենթակետով, 2-րդ մասի 3.3 կետով և 2-րդ մասի 5.1 կետով սահմանված չէ գնային առաջարկի բոլոր էջերը ստորագրված և կնքված լինելու վերաբերյալ որևէ պահանջ, ուստի այդ հիմքով Ընկերության կողմից ներկայացված հայտի մերժումն անհիմն է և չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից:

Գտնում ենք, որ տվյալ դեպքում Պատվիրատուն, մերժելով «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի հայտը՝ գնային առաջարկի էջերը սահմանված կարգով կնքված և ստորագրված չլինելու հիմքով, խախտել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, քանի որ Ընկերությունն Ընթացակարգի հրավերի հավելված N 4՝ գնային առաջարկը, ներկայացրել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և Հրավերով սահմանված կարգով կնքված և ստորագրված:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի 09.02.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել. դադարեցնել «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. հունվարի 25-ին ժամը 14:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով՝ «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-11/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան